ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69,
(37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ _____ առ " " _____ 2024թ.

Ձեր № ա/հ առ "26" 09 2024թ.

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-57/24-01/224 պայմանագիրը միակողմանի լուծման մասին)

«ԳԻՆԳԿՈ» ՍՊԸ
տնօրեն
Դ. Դանիելյանին

Հարգելի՛ պարոն Դանիելյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար տնտեսական, սանիհիգիենիկ և լվացող միջոցների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-57/24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ԳԻՆԳԿՈ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի մայիսի 27-ին կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-57/24-01/224 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում», սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ով 23-րդ չափաբաժնի համար սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան օճառը Ձեր կողմից մատակարարված չէ:

Հաշվի առնելով Պայմանագրի դրույթները և Ձեր կողմից ստացված գրությունը տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ԳԻՆԳԿՈ» ՍՊԸ-ի միջև 2024թ. մայիսի 27-ին կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-57/24-01/224 պայմանագիրը 23-րդ չափաբաժնի մասով և առաջարկում եմ 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (54 000 ՀՀ դրամ) և որակավորման (81 000 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91